



28 (183). ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Վերջին դատաստանի օր՝ Քրիստոս պտի նստի մըջ Առնաուտի կալի՝ ուր հախ-աթոռքին², հրաման տա՝ օր հրիշտակներու մեծ՝ Գարրեկ զփող փչե, չըմեն մարդիկ գան հավաքվին մըջ կալին, օր քնքեն յիմնա՝ ո՛ն ինչ է էրի-չէրի: Էն օր արդար է՝ հոգին պտի ըսե. «Մա՛րմին, չելի էրթանք հախ-դատաստան», էն օր մեղավոր է՝ պտի ըսե. «Յե՛լի, չե՛լի, գարշելի, էրթանք դատաստան»: Դատաստան էրթըլու մեկ ճամպա կա, ըդի մազե կարմունջն է, ուր տակով կպրի գետ գընցնա, ո՛ն արդար է՝ գընցնա, ո՛ն մեղավոր է՝ կը պատի մըջ կպրե գետին, չոնի կը տանջվի հուր-հավիտենից:

¹ Ուտնիելի կալը, որ ըստ ավանդության Դավիթ թագավորը գնեց, վրան զոհի սեզան կազմեց և վերջը, իր որդի Սողոմոնը տաճար կառուցեց. այժմ՝ Օմարի մըղկիթ:

² Արդարության, ճշմարտության աթոռ (Մ. Բ.):

